

**ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԺՎԱՐ ՏԱՐԻՔ**

Մանկավարժական պրակտիկայում և հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններում դեռահասությունը (10-11-ից մինչև 13-14 տարեկան հասակը) դիտարկվում է որպես «դժվար տարիք»: Մանկությունից հասունության անցումը դեռահասության փուլում տեղի ունեցող զարգացման բոլոր՝ ֆիզիկական, հոգևոր, բարոյական և սոցիալական կողմերի հիմնական բովանդակությունն է և էական առանձնահատկությունը: Այս տարիքում օրգանիզմի, ինքնագիտակցության, չափահասների ու ընկերների հետ ունեցած փոխհարաբերությունների, սոցիալական փոխներգործության ձևերի, հետաքրքրությունների, ուսումնական գործունեության, ինչպես նաև վարքը, ողջ գործունեությունն ու հարաբերությունները միջնորդավորող բարոյաքաղաքական դիրքորոշումների բովանդակության վերակառուցման հետևանքով երևան են գալիս հասունության նշաններ՝ դժվարություններ ստեղծելով ուսումնադաստիարակչական աշխատանքում:

Դեռահասության «դժվար տարիքը» կամ «ճգնաժամը» որոշ գիտնականներ (Հոլլ, Ֆրոյդ և ուրիշներ) պայմանավորում են կենսաբանական գործոնով: Ամերիկյան ազգագրագետների (Ռ. Բենեդիկտ, Մ. Միդ և ուրիշներ) հետազոտությունները հերքեցին, այսպես կոչված, բիոգենետիկ տեսությունը, ցույց տվեցին սոցիալական միջավայրի և դաստիարակության որոշիչ դերը դեռահասի անձի ձևավորման գործընթացում՝ ապացուցելով, որ «երեխայի կյանքի կոնկրետ սոցիալական հանգամանքներով են պայմանավորված հետևյալ երևույթները. 1) դեռահասության փուլի տևողությունը, 2) ճգնաժամի, կոնֆլիկտների ու դժվարությունների առկայությունը կամ բացակայությունը, 3) մանկությունից չափահասության անցնելու գործընթացի բնույթը: Այդ հետազոտությունները թույլ են տալիս հանգել ֆրոյդիստական պատկերացումների հետ անհամատեղելի եզրակացության. «Մարդու մեջ բնականը չի կարելի հակադրել սոցիալականին, քանի որ նրանում բնականը սոցիալական բնույթ ունի»:<sup>1</sup>

Ուսումը դեռահասի առաջատար գործունեությունն է, ուստի ամենից առաջ տեսնենք՝ ինչպիսի դժվարություններ են առկա դեռահասների ուսումնական գործունեության ընթացքում: «Ուսուցում» հասկացության բովանդակությունը դեռահասության շրջանում ընդլայնվում է, քանի որ գիտելիքների ձեռքբերման գործընթացը հաճախ կատարվում է նաև դպրոցի և ուսումնական ծրագրերի սահմաններից դուրս, դառնում է ինքնուրույն ու նպատակասլաց: Ուսումնասիրությունները միաժամանակ ցույց են տալիս, որ դեռահասները միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով: Այդ տարբերությունները նկատելի են՝

- *ուսման նկատմամբ դրսևորվող վերաբերմունքում*, որը կարող է լինել խիստ պատասխանատու կամ անտարբեր (վերջինս տեղիք է տալիս դժվարության).
- *ընդհանուր զարգացման մակարդակներում*. Ուսանց մոտ այն շատ բարձր է և հիմնըված է դեռահասի համար խիստ լայն գիտելիքների վրա, իսկ ուրիշները ունենում են նեղ մտահորիզոն (հատկապես ուսման մեջ հետ մնացողները).
- *ուսումնական նյութի յուրացման եղանակներում*. Ուսանք ունեն ինքնուրույն մտավոր աշխատանքի և նյութը շուտ ըմբռնելու ունակություն, իսկ ուրիշների մոտ ինքնուրույն մտավոր աշխատանք կատարելու ունակությունները գրեթե բացակայում են (այս թերությունը զուգորդվում է նյութը մեխանիկորեն սերտելու սովորության հետ).
- *հետաքրքրություններում*. Ուսանք ցայտունորեն արտահայտված հետաքրքրություններ են հանդես բերում գիտելիքների տարբեր բնագավառների նկատմամբ, իսկ այլ դեռահասներ համարյա թե զուրկ են իմացական հետաքրքրություններից և այլն:

Դեռահասի՝ ուսման նկատմամբ հետաքրքրությունը ամենից առաջ կապված է ուսուցչի հետ. «Դեռահասները գնահատում են գիտակ ու խիստ, բայց արդարամիտ, տակտով օժտված ուսուցիչներին, որոնք կարողանում են հետաքրքիր ու հասկանալի ձևով բացատրել նյութը, ընտրել աշխատանքի միջտ տեմպ, նրանում ներգրավել աշա-

<sup>1</sup> Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 135:

կերտներին»:<sup>2</sup> Միրելով տվյալ ուսուցչին՝ դեռահասները սիրում են նաև նրա դասավանդած առարկան: Դեռահասները (և ոչ միայն նրանք) հիվանդագին են ընդունում լավ ուսուցչի փոփոխությունը: «Ուսուցչի փոխվելու հետևանքով երբեմն փոխվում է ողջ դասարանի վարքագծի ու աշխատանքի բնույթը»:<sup>3</sup>

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահաս տարիքում նվազում է ուսման նկատմամբ հետաքրքրությունը: Առանձնակի ուշադրության է արժանի դեռահասների ուսումնական ակտիվության էական անկման հիմնահարցը: Առանձնացվում են այդ երևույթի հետևյալ պատճառները. ուսուցման գործընթացում գիտելիքներ ստանալու պահանջի նվազումը, դպրոցական կրթության միջին աստիճանի ուսումնական նյութերի բարդացումը, ճիշտ ինքնագնահատման կարողության բացակայությունը, դեռահասների նկատմամբ ծնողների հսկողության թուլացումը կամ էլ, ընդհակառակը, չափից դուրս մանրախնդիր վերահսկողությունը, արտադպրոցական միջոցառումներով առավելապես հետաքրքրվելը, սեռական հասունության հետ կապված դժվարությունները և այլն: Դեռահասների մտավոր պասիվության հիմնական պատճառը ուսման մեջ իր ակտիվությունը դրսևորելու անկարողությունն է: Պատճառ կարող են լինել նաև հիվանդությունը կամ հոգնածությունը, որ միշտ վատ են ներգործում երեխայի ֆիզիկական ու մտավոր ուժերի վրա: Դրա համար էլ երեխայի ման գիճակը պետք է լրջորեն մտահոգի ծնողներին և ուսուցիչներին:

Փոքրածավալ սույն հոդվածում դիտարկենք հատկապես սեռական հասունացման հետ կապված դժվարությունները: Չափահասության զգացումը փոխում է դեռահասի վարքը՝ տեղիք տալով եսակենտրոն արարքների ու գործողությունների: Սեռական հասունացման հետ կապված ամենատևական և ամենացայտուն ֆիզիոլոգիական կրիզը զգալիորեն խախտում է դեռահասի այն հարաբերական հոգեկան հավասարակշռությունը, որ ստեղծվել էր նրա մեջ նախորդ տարիքային փուլում: Աքսելերացիայի գործընթացն էլ ծանրացնում է ֆիզիոլոգիական կրիզի ընթացքը, ուժեղացնում աններդաշնակությունը, ստեղծում յուրատեսակ տարբերություններ մի կողմից՝ ֆիզիկական ու մտավոր հասունացման, մյուս կողմից՝ տնտեսական կախվածության և սոցիալական անլիարժեքության միջև: Բացի դրանից՝ «չափազանց բարդանում է մեծահասակների ներթափանցումը երեխայի ինտիմ աշխարհը, որովհետև ինքը՝ դեռահասը, միշտ չէ, որ ավագ դաստիարակների առջև բացում է զաղտնիքների վարագույրը»<sup>4</sup>:

Սեռական հասունացման հետ կապված չափահասության զգացումը տարբեր ուժգնությամբ է դրսևորվում տղաների և աղջիկների մեջ: Տղաների սեռական հասունացման հետ կապված ֆիզիոլոգիական վերափոխման արտաքին դրսևորումները ավելի քիչ են արտահայտված: Երբեմն նրանց դեմքին երևում են, այսպես կոչված, դեռահասի պզուկներ, փոխվում է ձայնը: Երազախաբությունը (սերմնահեղուկի ինքնաբերաբար արտահոսումը) քնած ժամանակ հաճախ ուղեկցվում է սեռական բնույթի երազներով: Այս բոլորը, իհարկե, որոշակի ապրումներ են առաջացնում տղաների մեջ, սակայն ոչ այնքան խորը, որքան աղջիկների մեջ՝ նախանշելով տղաների ու աղջիկների հոգեբանական առանձնահատկությունները: Ամսական ցիկլի սկսվելը լուրջ պահ է աղջկա կյանքում: Առաջին ամսականի անսպասելիությունը, սովորաբար, ուղեկցվում է հոգեկան ծանր ապրումներով: Ուստի անհրաժեշտ է, որ ծնողները նախապես իրենց աղջկան զգուշացնեն հնարավոր ամսականի սկսվելու մասին, մատչելի ձևով բացատրեն դրա էությունը, սովորեցնեն՝ ինչպես վարվել տվյալ դեպքում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահաս աղջկա դաստիարակության գործընթացում դժվարություններ են ստեղծվում հենց ամսականի հետ կապված, քանզի ամսականի սկսվելը սովորաբար հանգեցնում է հոգեբանական դրվածքի արմատական փոփոխման, բարոյական դաստիարակության դժվարության: Ամսականի շրջանում դեռահաս աղջկա մեջ առաջանում է իր անձի ոչ լիարժեքության զգացում: Այդ շրջանում վատանում է աղջիկների ինքնագագացողությունը, նրանց անհանգրստացնում են գլխացավերը, ընդհանուր թուլությունը, վատանում է տրամադրությունը,

<sup>2</sup> Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, էջ 172:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 173:

<sup>4</sup> Վ. Պ ե տ ր ու ն ե կ, Լ. Տ ա ր ա ն, Հուզումնային հասակ, Եր., 1975, էջ 20:

ախորժակը, հաճախակի է դառնում հակվածությունը դեպի նեգատիվիզմը: Սակայն ճիշտ խնամքի ու դաստիարակության ընթացքում ամսականի շրջանն ավարտվում է քարեհաջող: «Դեռահաս աղջիկների ամսականի սկսվելու միջին տարիքը (աքսելերացիայի ուղղումները հաշվի առնելով) 12-13 տարեկանն է: Սակայն անհանգստանալու պատճառներ չկան, եթե ամսականն սկսվի մեկ-երկու տարի ավելի շուտ կամ ուշ»:

Ծնվելով դեռահասի գիտակցության մեջ, իդեալական նպատակները կատարում են էական իմաստակազմավորիչ գործառույթ՝ նախագծելով տվյալ դեռահասի անձի հետագա զարգացման որոշակի ուղիվածությունը: Այդ գործընթացում վճռական դեր են կատարում այն իդեալները, որ դեռահասը ընտրում է ընկերական շրջապատից, ուսուցչական անձնակազմից, գրական երկերից, կինոնկարներից և այլ աղբյուրներից: Եվ դա հասկանալի է. «Դեռահասը ելք է փնտրում մարդկանց (մեծահասակների) սոցիալական փոխներգործության լայն ասպարեզ դուրս գալու համար, բայց գտնվում է առավելապես այն պատկերացումների, երևակայության մեջ, որոնց միջոցով նա ինքն իրեն աշխարհ է մտցնում և աշխարհն իրեն է հարմարեցնում: Այս գործում նրա հիմնական միջնորդը *իդեալն է*:<sup>5</sup> Ըստ հոգեբան Ա. Տոլստիխի՝ իդեալի բովանդակությունը դեռահասին գործում ուժի զգացում է ներարկում. դեռահասը իրեն երևակայում է ընդունակ և կոչված աշխարհը փոփոխելու: Այն, որ իդեալի բովանդակությունը արդեն զարգացել է և իրականացվել, նա չի տեսնում և չի էլ կարող տեսնել: Այդ պատճառով նրան թվում է, որ իդեալը, ինչպես նաև իր սեփական անձը չեն ընդունվում աշխարհի կողմից: Եվ աշխարհի հետ ներդաշնակության զգացումը, որը նա ուներ երեխա ժամանակ, անհայտանում է, փլվում: Նա արդեն երեխա չէ, որովհետև հասարակական նպատակներ է դնում (հաճախ մաքսիմալիստական և ուտոպիստական), նա դեռ չափահաս չէ, որովհետև նա այդ նպատակները չի կարող իրականացնել:

Ոչ միայն որոշ ծնողներ, ուսուցիչներ, դաստիարակներ, այլև տեսաբան մանկավարժներից ունանք դեռահասության դժվարությունները կապում են տղաների ու աղջիկների կարծեցյալ սիրահարվածության հետ: Իհարկե, դեռահաս տղաների և աղջիկների մեջ առաջանում են հասունության զգացումներ, բայց այդ ամենը չի կարելի կատարյալ սիրո զգացմունք համարել: Այս հիմնահարցը շատ լավ է մեկնաբանել հոգեբան Վ. Կրուտեցկին՝ գրելով. «Առաջին անգամ ավագ դպրոցական տարիքում է հանդես գալիս հատուկ զգացմունք՝ սերը: Սա բոլորովին նոր հոգեկան վիճակ է դպրոցականի կյանքում, որը չկար դեռահասի մոտ: Դեռահասի վերաբերմամբ ավելի ճիշտ կլինի խոսել անձնական համակրանքի, հրապուրանքի, մտերմության, նույնիսկ առաջին սիրահարվածության զգացմունքի երևան գալու մասին, բայց սերը՝ որպես խոր, ուժեղ, գործուն զգացմունք, առաջանում է միայն վաղ պատանեկության տարիքում: Պատանեկան սերը, որպես կանոն, մաքուր է, առողջ, ողջախոհ, առաքինի, հարուստ բազմազան ապրումներով, ունի նրբություն, երազկոտության, քնարականության և անկեղծության երանգ»:<sup>6</sup> Այստեղից բխող գործնական հետևությունը թողնում ենք ծնողներին և միջին ու բարձր դասարաններում դասավանդող ուսուցիչներին, դաստիարակներին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռահասների վարքի փոփոխման կամ շեղման պատճառ են դառնում նրանց ընկերային վատ հարաբերությունները: Ծնողներին, ուսուցիչներին, դաստիարակներին պետք է հետաքրքրի այն, թե ընկերական ինչ միջավայրում է ընթանում տվյալ դեռահասի գործունեությունը: Ընտանիքը, ընկերական միջավայրը հանդես է գալիս որպես դեռահասի անձի ձևավորման հասարակական միջավայր: Անձի ձևավորման գործընթացում առաջնությունը տալով դաստիարակությանը՝ գիտական մանկավարժությունը չի ժխտում շրջակա միջավայրի դերը: Այս կապակցությամբ վկայակոչենք Մ. Նալբանդյանի ուսանելի դրույթը. «Բազմաթիվ փաստերը դրականապես հաստատում են այն բանը, թե մարդը ծնանալով չունի յուր մեջ առաքինության կամ վատթարության սկիզբն կամ տարրը, և հոգու այդ ունակությունը հետևանք է նորա լավ կամ վատ շրջակայքի ազդեցությունից»:<sup>7</sup> Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «դեռահասների ընկերությունը միջանձնային հաղոր-

<sup>5</sup> Ա. Տոլստիխ, *Մանկությունից հետո*, Եր., 1985, էջ 64:

<sup>6</sup> Վ. Կրուտեցկի, *Մանկավարժական հոգեբանության հիմունքները*, Եր., 1975, էջ 225:

<sup>7</sup> «Հայ մանկավարժներ», Գիրք Ա, Եր., 1958, էջ 267:

դակցման ցայտուն դրսևորումներից մեկն է, որը չի հարաբերակցվում ո՛չ խմբավորումներ ստեղծելու հակադրման, ո՛չ ձանձրության և ո՛չ էլ որևէ այլ՝ ավելի պարզ հարաբերությունների հետ: Ընկերության ձգտումը չի կարելի համարել մաս միայնակությունից խուսափելու այլընտրանքային տարրերակ. կրտսեր տարիքի դեռահասները վախենում են միայնակությունից, իսկ ավագները սկսում են գնահատել մեկությունը՝ տարրերելով այն միայնակությունից: Սենության միջոցով դեռահասը փորձում է բավարարել սեփական անձի հետ ինտիմ շփման պահանջումները»<sup>8</sup>:

Նկատել ենք, որ միջին դասարաններում ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում դժվարություններ են ստեղծվում դեռահասների՝ տարբեր դրդապատճառներով կոնֆլիկտները: Կոնֆլիկտների հենակետ են ծառայում հատկապես դեռահասների եսակենտրոն ցանկությունների չկատարումը, նրանց այնպիսի արարքների ու գործողությունների արգելումը, որոնք հակասում են հասարակական բարոյական նորմերին ու կանոններին: Ուրեմն կոնֆլիկտը վերացնելու համար պետք է փոխել դեռահասի դիրքորոշումը, կոնֆլիկտի հենակետը: Այս կապակցությամբ կուզենայինք վկայակոչել դեռահաս աղջիկների կոնֆլիկտների ուսումնասիրման Ս. Անտոնյանի փորձը, որի արդյունքում նա եզրակացնում է. «Կոնֆլիկտից առաջացած տհաճ իրավիճակից կարելի է խուսափել՝ հրաժարվելով այն ցանկությունից, որը չի համապատասխանում ավելի վաղ մշակված դիրքորոշման հենակետին, ինչպես նաև, ձեռք բերելով նոր գիտելիքներ, որը կնպաստի հենակետի վերագնահատմանը՝ դրանով իսկ հարթելով կոնֆլիկտը (ընդգծումը մերն է՝ Ռ.Պ.): Անձի հոգեկան ճկունությունից է կախված՝ նա կկարողանա՞ փոփոխել իր դիրքորոշումները և վերանայել իրադրության նկատմամբ իր վերաբերմունքը, թե՞ ոչ»<sup>9</sup>:

Դեռահասների (և ոչ միայն նրանց) վարքի որոշ շեղումներ կապված են սքրեսային և աֆեկտիվ հոգեվիճակների հետ, երբ նյարդահոգեկան գերլարվածության պայմաններում թուլանում է գիտակցության վերահսկողությունը, և դեռահասը թույլ է տալիս բարոյական վարքին անհարիր արարքներ: Հոգեբանական ուսումնասիրությունները օրինակ՝ արձանագրում են, որ սքրեսը հաճախ զուգորդվում է ֆրուստրացիայի հետ: Ասենք դեռահասի մեջ ֆրուստրացիոն հոգեվիճակ է առաջանում, երբ նրա նպատակների ձեռք բերման ճանապարհին ծնողները կամ ուսուցիչները դժվար հաղթահարելի արգելքներ (ֆրուստրատորներ) են դնում: Ֆրուստրացիոն հոգեվիճակը ամենից առաջ աչքի է ընկնում տհաճ հույզերով, որոնք էլ տեղիք են տալիս անբավարարվածության, զայրության, հուսահատության և վարքի բացասական այլ հատկությունների: Հոգեբան Ա.Նալչաջյանն այդ մասին գրում է, որ «Ֆրուստրացիոն վիճակում գտնվող մարդիկ հանդես են բերում վարքի հատուկ պաշտպանական ձևեր, որոնց իրագործման համար օգտագործվում են պաշտպանական մեխանիզմներ»: Ցավոք պիտի նշել, որ դեռահասության շրջանում այդ «պաշտպանական մեխանիզմները» լիովին չեն գործում:

Իհարկե, վերոնշյալով բնավ չեն սպառվում դեռահասության շրջանում ի հայտ եկող դժվարությունները, սակայն հաղորդման մեջ ներառված նյութերն էլ կարող են օգնել ծնողներին, ուսուցիչներին, դաստիարակներին՝ խելամտորեն հաղթահարելու դեռահաս տարիքի հիմնական դժվարությունները:

## НЕСОВЕРШЕННОЛЕТНИЕ КАК ТРУДНЫЙ ВОЗРАСТ

\_\_\_\_ *Резюме* \_\_\_\_\_

\_\_\_\_ *Р. Погосян* \_\_\_\_\_

В онтогенезе подростковый возраст считается “сложным возрастом”. Трудности проявляются как в учебном процессе, так и на протяжении воспитания. В сообщении представлены причины некоторых трудностей несовершеннолетия, показаны эффективные способы их преодоления, которые могут оказать практическую помощь родителям и преподавателям средних классов общеобразовательных школ.

<sup>8</sup> Ս. Հ ա ռ թ յ ու ն յ ա ն, *Մարդու հոգեկենդանական զարգացման հիմունքները*, Եր., 2004, էջ 163:

<sup>9</sup> Ս. Ա ն տ ո ն յ ա ն, *Մեռադեռային վարքի կայացման դինամիկան*, Եր., 2004, էջ 50: